



ԿԱՏԵՐ ՊԼԱՍՏՄԱՍՍԱՅԻՑ

Ռուս բաղաճի (Բուլղարիա) Գեորգի Իմի-
տրովի անվան նավաշինական գործարանում
կառուցել են մի կատեր, որի կորպուսն ամբողջ-
ովն պատրաստված է ապակեքից և բազմա-
եքերային խեցից: Կորպուսի պատերը, որոնք
ունեն 10 մմ հաստություն, բաղկացած են ապա-
կեկոսվածքի և բազմաեքերային խեցի շոշո-
շերից:

Չորս տեղանոց պլաստմասսայն այդ կա-
տերը, որի կշիռը 150 կգ է, զարկացնում է ժա-
մում մոտ 50 կմ արագություն:

*Բուլղարական Հեռագրական
գործակալություն*

ՍՈՍԻՆՁ՝ ԶՈԳԱՆՅՈՒԹԻ ՓՈԽԱՐԵՆ

Հաճախ անհրաժեշտ է լինում շտապ վերա-
նորոգել ռադիոապարատուրան կամ որևէ այլ
սարք, բայց ձեռքի տակ չես ունենում գողիչ:
Այստեղ օգնության է հասնում արժաբե լցված-
ում էլ պոսիդային սոսինձը: Այն էլ կտրականու-
րյան հրաշալի հաղորդիչ է, դիմում է մին-
չև 150° ջերմության և շատ ամուր է: Չորանում
է բնակարանային ջերմաստիճանում: Այս սոսին-
ձը մշակել են անգլիացի ֆիզիկոսներ:

ՏԱՍՍ

ԱՎՏՈՄԱՏԻԿ ԳՐՔԵՐ

ԱՄՆ-ում ավտոմատիկայի բնագավառում
նոր նվաճումները հնարավորություն են տա-
լիս մոտակա տասնամյակում սովորական հեռա-
խոսից ոչ բարդ սարքավորման սխեմայով ավտո-
մատ կերպով ապահովել բնակարանների և
հիմնարկների կապը տեղական գրադարանների,
իսկ վերջիններիս օգնությամբ ռեգիոնալ և ազ-
գային կենտրոնների հետ: Այսպիսով, գրադա-
րանից հետո գտնվելով հանդերձ կարելի է տե-
ղեկություն ստանալ ցանկացած հարցի մասին:

«Կուրյեր Յունեսկո»

Գյուղատնտես Զ. Սմիրն (Իլինոյսի Նահանգ,
ԱՄՆ) նկատել է, որ եգիպտացորենն ալելի
տաք է աճում, երբ մոտակայում երաժշտու-
րյուն է լսվում: Այդ բանը հաստատվել է փո-
ռերի ժամանակ:

Փորձնական հողամասեր շրջապատել են
բարձրախոսներով և գիշեր ու ցերեկ հաղորդել
երաժշտություն: Ամենատառ բերքը ստացվել է
այն հողամասից, որտեղ եգիպտացորենն աճել է
ցածր հաճախականության (450 ներց) ձայնի
ուղեկցությամբ. բերքն այստեղ 6—10 անգամ
բարձր է եղել, քան այն հողամասերում, ուր
ձայնամթակում չի կատարվել:

«Նաուկա Ի տեխնիկա»

ԼԱՐՈՐԱՏՈՐԻԱՆ... ՊԱՅՈՒՍԱԿՈՒՄ

Սովորաբար այսպես է լինում. երկրաբանը
գտնում է մի միներալ և իր հետ բարձր է տալիս
տասնյակ կիլոմետրեր, որպեսզի նետ լարա-
տորիայում պարզի, քե որքան և ինչ էլեմենտ-
ներ են պարունակվում նրա մեջ: Այժմ այդպի-
սի անալիզները կատարվում են անմիջապես
դաշտային պայմաններում, ունեզենոադիոմե-
րիկ անալիզատորի օգնությամբ, որի սերիական
բողարկումը կատարվում է Սովետական Միու-
րյունում: Սարքն օժտված է բարձր արտադրա-
ղականությամբ, հարմար է և պարզ գործա-
ծություն ունի:

«Սովետսկի Սոյուզ»

ՄԵՔԵՆԱՆ ԿՃՊՈՒՄ Է ՀՈՒՄ ԶՈՒՆ

Անգլիական մի ֆիրմա արտադրել է բազմում
300.000 պտույտ կատարող ֆրեզերային
միեխատյուր մի հաստոց, որը նախատեսված
է նշգրիտ մեքենաշինության համար: Այդպիսի
արագությամբ ու բարձր նշգրտությամբ աշ-
խատող հաստոցը կատարում է ամենաուր
գործողություններ, օրինակ... առանց բաղաճը
վնասելու հաճում է հում ձվի կենսալ: Ռեկլամելու
նպատակով այս օպերացիան կատարվել է ար-
դյունաբերական զանազան տոնավաճառներում և
մեծ հիացմունք պատճառել այցելուներին:

ՏԱՍՍ

Այս, այդպիսի ապակին արևի ճառագայթների տակ գունափոխվելու հատկություն ունի: Բավական է, որ արևի լույսն ընկնի այդ քափանցիկ ապակու վրա, և այն ներկվում է կապույտ գույնով: Եվ որքան ուժեղ է լուսավորում արևը, ապակու գույնն այնքան ավելի է մգանում: Արևամուտից հետո ապակին նորից դառնում է քափանցիկ:

Ապակու այդ նոր տեսակի կիրառման ապարեզը բավական լայն է (խանութների ցուցափեղկեր, լուսամուտներ և այլն):

Գույների այդ փոփոխության գաղտնիք մոլիբդենի միացությունների մեջ է: Ավելի քան մեկ դար է, ինչ հայտնի է, որ մոլիբդենի բրու լուծույթները փոխում են իրենց գույնը, երբ լույսն ընկնում է դրանց վրա: ԱՄՆ-ում կատարված նոր հետազոտությունները ցույց տվեցին, որ մոլիբդենի և քափանցիկ պլաստմասսայի խառնուրդը լույսի ճառագայթի տակ կապույտ գույն է ստանում: Օլտագործելով մոլիբդենի այդ հատկությունը ամերիկյան մասնագետները ստացել են այս նոր ու գեղեցիկ ապակին:

«Սյանս է վի»

ՍՈՒՋՎՈՂ ՆԱՎԱԿ

Նավարեկման ժամանակ, մանավանդ, երբ ուժեղ փոթորիկ է, ուղևորներին սովորական նավակների մեջ իջեցնելը մեծ դժվարություններ է հետ է կապված:

Այդ դժվարություններն էլ դրդեցին հույանդական կոնստուկտորներին մշակելու նոր տրայի փրկարար նավակ:

Յոթ մետր երկարություն ունեցող այդ նավակը նախատեսված է 16 մարդու համար: Նավակի վերին մասում կա 4 դռնակ, որտեղից և ներս են լցվում ուղևորները: Նավակը շարժման մեջ է դրվում 12 ձիաուժ ունեցող դիզելային շարժիչի միջոցով:

Վրարի դեպքում, ուղևորներով բեռնված նավակը հոլովակների միջոցով սահում է դեպի բաց ծով, «սուզվում» ջրի տակ ու դուրս է գալիս խորտակվող նավից անվտանգ հեռավորության վրա:

Այժմ Հոլանդիայում հման փրկարար նավակ է մշակվում տանկերների համար: Այն կունենա ցնցողային հարմարանք և կկարողանա անցնել նույնիսկ կրակի միջով:

ՏԱՍՍ

Բերժատվությունը բարձրացնելու համար հողը պարարտացնում են: Բայց չէ որ բույսերն իրենց անման համար անհրաժեշտ նյութերն ստանում են ոչ միայն հողից, այլև օդից: Գույն հարկավոր է պարարտացնել նաև օդը:

Այս հարցով էին մտաճգված վերջերս հունգարական քանդաբույծները: Անցյալ տարի հետաքրքիր փորձեր արվեցին մերձբուդապեշտյան մի քանի շերմոցային տնտեսություններում:

Չերմոցների օդում ածխաբրու լազի քաղաղությունը արհեստականորեն հասցրին մինչև մեկ տոկոսի (սովորաբար այն կազմում է մոտ 0,03 տոկոս): Արդյունքը շրմոցոցիչ էր: Պոմիդորի, վարունգի և վաղահաս կատաֆիլի բերժատվությունն ավելացավ մոտ երեք, իսկ բոդկիներ, գազարներ և սալարիներ մոտ վեց անգամ: Բայց սա դեռ բոլորը չէ: Ածխաբրու զագով հարստացված մրնուլորտում բանջարանցային կուլտուրաները սովորականից կրկնակի անգամ արագ են հասունանում:

Դժվար չէ շերմոցներն ապահովել ածխաբրու զագի բարձր պարունակությամբ: Ածխաբրու զագի քալոներից պետք է պարբերաբար բաց քողենլ անհրաժեշտ քանակությամբ զագ: Իհարկե, պետք է հոգ տանել, որպեսզի շրջանակի ճեղքներից այն դուրս չծորա: Դրա համար անհրաժեշտ է շրջանակներին քսել հասուկ հերմետիկ նյութ:

«Չնանին սիլա»

ԱՂՄՈՒԿԸ ՎԵՍՍԱԿԱՐ Է

Այն հյուծում է գլխուղեղային կեղևի բլիբներ, քայքայում նյարդային համակարգությունը: Աղմկոտ միջավայրում մարդիկ ավելի արագ են հոգնում:

Ինչպե՞ս պաշտպանել աղմուկից արտադրության մեջ աշխատող մարդկանց:

Այս պրոբլեմով են զբաղված Աշխատանքի պահպանության համամիութենական գիտահետազոտական ինստիտուտի (Մոսկվա) մի խումբ մասնագետներ: Նրանք պատրաստել են հատուկ մի խցիկ, որտեղ ձայները գրեթե լիովին կլանվում են: Այդ խցիկում կհետազոտվեն տարբեր ձայնամեկուսիչ նյութեր, կկատարվեն ֆիզիոլոգիական փորձեր:

ՏԱՍՍ

Լիդա ֆադաֆի (Հյուսիսային Անդիա) հիվանդանոցում կատարվել է մի վիրահատում, որի ընթացքում 38-ամյա կնոջ սրտի արատավոր փականը փոխարինվել է դրանից մի ամիս առաջ մանացած տղամարդու սրտի փականով: Վերջինս մշակված է եղել հակաբիոտիկներով և սառեցված վիճակում պահվել է մինչև այն պահը, երբ բժիշկները հնարավոր են գտել կատարել վիրահատումը:

Վիրահատումը տևել է 12 ժամ, հիվանդի սիրտը կանգնեցվել է 3 ժամով: Վիրահատումից մի շաբաթ անց հիվանդի վիճակը հիանալի է եղել:

Որքան հայտնի է, դա առաջին այդ տիպի վիրահատումն է: Այն կատարվել է օրգանիզմի ռեոնոցման և «սիրտ-բոֆ» ապարատի օգտագործումով: Արատավոր փականը նորով փոխարինելուց հետո այդ ապարատի միջոցով հիվանդի մարմնի ջերմաստիճանը նորմալացվել է, և սիրտը սկսել է նորից բաբախել: Վիրահատությունից հետո կարգավորվել է հիվանդի սրտի զարկերի տեմպը, և առաջին անգամ նրա արյան ճնշումը դարձել է նորմալ:

Ռեյտեր գործակալություն

Տալիբի պոլիտեխնիկական ինստիտուտի գիտնականները ստեղծել են ճոր կարասոսինձ: Այն պատրաստվում է բերքաբարձր յուղի և կարաչրերի մեջ եղած դիֆֆուզիոններից:

Այդ զարմանալի նյութը այնպես է սոսնձում պենոբետոնից ու սիլիկալցիտից պատրաստված դետալները, որ ոչ մի ուժ չի կարողանում նրանց անջատել: Մայրանեղ դեպքում նրանք շարդվում են, բայց սոսնձված մասերը մնում են անբաժանելի: Սոսնձված մասերը շատ լավ դիմանում են սառնամանիքին ու մթնոլորտային պայմաններին:

Նոր կարասոսինձով կարելի է կպցնել սենյակի երկարության պանելներ: Այն արշեն կիրառվել է ավտոբուսային տաղավարի շինարարության մեջ սիլիկալցիտային պանելները սոսնձելու համար:

«Նաուկա»-ի տեխնիկա»

ՄԵՐ ԸՆԹԵՐՅՈՂԻՆ

Հարգելի ընկեր, եթե Դուք ցանկանում եք սիւտեմատիկաբար կարդալ «Գիտություն և տեխնիկա» պարբերականը, ապա խորհուրդ կտանք հուլյս չդնել կրպակներում կատարվող հատվածառի վրա (այն լինելու է սահմանափակ քանակությամբ): Պատահականություններից խուսափելու համար շատ հարմար և ձեռնտու է բաժանորդագրությունը:

Շարունակվում է պարբերականի

1964 թվականի

բաժանորդագրությունը:

Պայմաններն են.

6 համարի գինը՝ 2 ռ. 40 կոպ.

12 համարի գինը՝ 4 ռ. 80 կոպ.

Բաժանորդագրությունն ընդունվում է «Սոյուզպեչատի» քաղաքային բաժիններում, բաժանորդագրության ընդունման կետերում, կապի հանգույցներում, բաժանմունքներում, իսկ հիմնարկ-ձեռնարկություններում, ուսումնական հաստատություններում, կոլտնտեսություններում, սովխոզներում, կառույցներում, ֆաբրիկա-գործարաններում՝ մամուլի հասարակական տարածողների միջոցով:

